ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10» օգոստոսի 2026թ. N ՄՈ/ 510 -Ա

ք. Արմավիր

«ՓՇԱՏԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԵՅԼԻ ՂՈՐՂԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նեյլի Ղորղանյանի 2026 թվականի օգոստոսի 6-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նեյլի Ղորղանյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի օգոստոսի 13-ից 21-ը ներառյալ՝ 7 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նեյլի Ղորղանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Մարետա Թադևոսյանին:
3. «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Մարետա Թադևոսյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի օգոստոսի 13-ից 21-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Նեյլի Ղորղանյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 24-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

10.08.2026

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ